

# ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻԶՈՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻԶՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Մարտ 2024

## ՄԵՐ ԽՕՍՔԸ



Ամէն տարի 8 Մարտին, ամբողջ աշխարհը կը նշէ «Կանանց Միջազգային Օրը»: Այս օրը կու գայ յիշեցնելու, թէ որքան մեծ եղած է կիներու դերը մարդկութեան կեանքին մէջ, եւ թէ որքան կարեւոր է պաշտպանել անոնց իրաւունքները: Իսկ անդրադառնալով հայ կիներու մասին, հայ ժողովուրդը ունեցած է նուրբ ու գեղեցիկ, միաժամանակ խելացի ու ստեղծագործ հայրենասէր կիներ: Հայ Կինը տարբեր ժամանակներու եղած է իր ընտանիքի կարեւոր սինը: Ան յաջողած է փոխանցել յաջորդ սերունդներուն ազգային դաստիարակութիւնն ու մշակութային արժէքները: Անոր դերը մեծ եղած է հայ ժողովուրդի ինքնութեան պահպանման գործին մէջ: Հայ Կինը աշխոյժ է նաեւ այսօր եւ տակաւին շատ բան ունի կատարելիք իր ընտանիքին ու ազգին նկատմամբ:

Այս օրը նշելէն զատ, այս տարի Մարտի վերջին երկու կիրակիներուն կը զուգադիպի Ծաղկազարդն ու Սուրբ Զատիկը: Բարի եւ օրհնեալ Ծաղկազարդ, նաեւ Շնորհաւոր Սուրբ Զատիկ բոլորին:



## Սուրբ Զատիկ

Ինչ կը նշանակէ Զատիկ:  
Յիսուս Քրիստոս իր մահէն երեք օր ետք Յարութիւն առաւ: Այդ Յարութեան տօնին կ'ըսենք նաեւ Սուրբ Զատիկ: Զատիկ կը նշանակէ տօն, ինչպէս նաեւ զատուիլ, հեռանալ մեղքերէն եւ վերադառնալ Աստուծոյ:  
Զատիկին հաւկիթներ կը ներկենք, հաւկիթը նոր կեանքի խորհրդանիշն է:  
Զատիկէն 48 օր առաջ կը սկսի մեծ պահքի շրջանը, այդ ընթացքին պահք պահողները կը հրաժարին կենդանական ուտելիքներէն, մեծ պահքի վերջին շաբաթը կը կոչուի աւագ շաբաթ, որուն մէջ կը մտնեն Քրիստոսի երկրային կեանքի վերջին կարեւոր դէպքերը՝ անոր յաղթական մուտքը Երուսաղէմ (Ծաղկազարդ), վերջին ընթրիքը, մատնութիւնը, չարչարանքներն ու խաչելութիւնը, թաղումն ու ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ:  
Զատիկի օրը առաւօտեան եկեղեցիներուն մէջ Սուրբ Պատարագ կը մատուցուի: Պատարագի աւարտին հաւատացեալներ զիրար ողջունելով կ'ըսեն.  
- Քրիստոս Յարեաւ Ի Մեռելոց  
- Օրհնեալ Է Յարութիւնը Քրիստոսի:

## ԾԱՂԿԱԶԱՐԴ

Ծաղկազարդ է այսօր՝  
Մանուկներու օր,  
Բոլորս հազած  
Պէսպէս զգեստներ,  
Ձեռքերնիս բռնած  
Գունազեղ մոմեր,  
Դէպ ժամ կը փութանք՝  
Մանկական շունչով:  
Կը ստանանք օրհնանք  
Ծաղկազարդ պսակ,  
Ձիթենիի ճիւղեր.  
Ու տուն կը դառնանք՝  
Խինդ ու ծիծաղով:

## ԶԱՏԻԿ

Ահա եկաւ նորէն գարուն,  
Ուրախ Զատիկ մտաւ մեր տուն.  
Կարմիր հաւկիթ, դեղին ճուտիկ,  
Եւ նապիկը ճերմակ փափիկ:  
Հարազատներ, ճաշեր պէսպէս,  
Հակթախաղ՝ յաղթող, պարտուող  
Ու բարեւի փոխարէն՝  
Քրիստոս յարեաւ ի մեռելոց,  
Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի:



## ԳԱԳԻԿ ԳԻՆՈՍԵԱՆ

Գագիկ Գինոսեան ծնած է 3 Օգոստոս 1966-ին, Վրաստանի Ախալցխա քաղաքին մէջ:




Գինոսեան երկար տարիներ պարած է «Վան» եւ «Ակունք» ազգագրական պարի համոյթներուն մէջ: Ան եղած է ժողովրդական ստեղծագործութիւններ հաւաքողն ու զանոնք գրի արձանագրողը. ինչպէս որ Կոմիտաս վարդապետ ըրած է հայ երգերու պարագային: Եղած է նաեւ «Կարին» ամսագրական երգ ու պարի խումբի հիմնադիրը եւ գեղարուեստական ղեկավարը:

Երգ ու պարի աշխարհէն դուրս, Գագիկ Գինոսեան մասնակցած է Արցախի առաջին պատերազմին կողմէրով Մարտակերտի, Ասկերանի, Մարտունիի, Լաչինի եւ Քելբաջարի ճակատներուն վրայ:

1994-1996 Գինոսեան ծառայած է Հայաստանի զինուած ուժերու գումարտակին մէջ: Ան 1995-1996 ուսանած է ամերիկացի Մոսկուայի Մարեշալ Շապոշնիկովի անուան դաշտային ռազմական ակադեմիան՝ ստանալով գունդի եւ ջոկատի հրամանատարի որակաւորում:

Ազգասէր այս արուեստագէտը իր կեանքի ընթացքին արժանացած է բազմաթիւ մետալներու, թէ՛ որպէս Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի վաստակաւոր գործիչ, թէ՛ որպէս մարտական դէմք:

Մշակութաբան եւ հասարակական գործիչ Գագիկ Գինոսեանը սրտի կաթուածով մահացաւ 6 Փետրուար 2024-ին:



## ՏԱԻՈՒՇ



Տաւուշի մարզը կը գտնուի Հայաստանի Հանրապետութեան հիւսիս-արեւելեան կողմը: Տաւուշի մարզի մէջ կ'իյնան Իջեանի, Տաւուշի, Նոյեմբերեանի եւ Դիլիջանի տարածքները: Տաւուշի հիւսիսին կայ Վրաստանը, իսկ արեւելեան կողմը Ատրպէյճանը:

Տաւուշի լեռներէն են Գուգարացը եւ Միափորը:

Տաւուշը արդիւնաբերական եւ կրթամշակութային կեդրոն է: Շրջանը հարուստ է հանքային ջուրով, փայտով եւ մետաղով: Տաւուշը նաեւ յայտնի է գինեգործութեամբ եւ գորգագործութեամբ:

Ինչ կը վերաբերի պատմամշակութային վայրերուն, շրջանը հարուստ է վանքերով, պատմական բերդերով, խաչքարերով, կամուրջներով եւ յուշակոթողներով:

Զբօսաշրջիկներ կ'այցելեն Տաւուշ, որովհետեւ կլիման մեղմ է, օդը մաքուր՝ հարուստ թթուածինով: Հոն կան հանքային բուժիչ ջուրեր եւ դեղաբոյսերով հարուստ անտառներ:

Երբ գտնուիք Տաւուշ, անպայման այցելեցէք Գօշավանք, Հաղարծինի եւ Մակարավանքի համալիրները եւ Տաւուշի բերդը:



## ՏԱԻՈՒՇԻ ԳՕՇԱՎԱՆՔԸ




1188 թուականին, Գօշավանքը հիմնած է Մխիթար Գօշ անունով հայ վանական մը, նիւթական օգնութիւն ստանալով իշխան Իւանէ Զաքարեանէն:

## ՄԽԻԹԱՐ ԳՕՇՆ ՈՒ ԻՐ ԿԱՐԾԻՔԸ ԿԻՆԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Մխիթար Գօշ պարզ վանական մը չէր, ան գիտնական էր եւ մանկավարժ: Ան գրած է առակներ եւ օրէնքներ: Իր իմաստութեան համբաւը այնքան մեծ եղած է, որ շատեր հեռու տեղերէն եկած են իր մօտ, իր աշակերտը ըլլալու: Անգլիացի մտաւորական Տէյվիս Լենկը (David Marshall Lang) Մխիթար Գօշը կը համեմատէ յայտնի առակագիր Եզովրոսի (Aesop) եւ Լաֆօնթէնի (Lafontaine) հետ:

Մխիթար Գօշ, որ ապրած է 1140-ական թուականներուն, իր «Հայոց Դատաստանագիրը» գիրքին մէջ արժեւորած է կնոջ կրթութիւն տալը եւ անդրադարձած՝ հաւասարութեան մասին: Ան այդ տարիներուն գրած է թէ ինչպէս պէտք է ճանչնալ ու յարգել կիներու պատիւն ու արժանապատուութիւնը, ինչպէս նաեւ անդրադարձած է կիներու ամուսնութեան եւ այլ իրաւունքներու մասին:





**ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ**

12 տարեկան որբ տղայ մը բերած էին Էջմիածինի Գեորգեան ճեմարանը, ան գունատ էր ու նիհար, անունն էր Սողոմոն: Երբ Սողոմոնէն խնդրեցին որ երգէ, «ո՛վ է այս տղան» հարցուց ամէն մարդ: Հայոց Գեորգ Դ. Կաթողիկոսն ալ յուզուած մտիկ ըրաւ եւ ըսաւ.

- Այս տղան սովորական տղայ մը չէ. երգը հոգիէն կու գայ... Ինչ ընտանիքի զաւակ է:

- Կօշկակար հայր մը ունեցած է, արեւմտեան Հայաստանի Քոթահիա քաղաքէն է:


- Թո՛ղ հոս մնայ եւ ուսումը շարունակէ,- ըսած է Կաթողիկոսը

Աւելի ուշ, այս պատանին եղաւ նշանաւոր երաժիշտ Կոմիտաս Վարդապետը: Կոմիտաս փոքր տարիքէն հետաքրքրուած էր հայ ժողովրդական երգերով եւ երբ մեծցաւ, անցաւ աշխատանքի: Ան գիտէ գիւղ պտտելով գրի առաւ բազմաթիւ երգեր ու դարձաւ հայ երգի Մեսրոպ Մաշտոցը, որովհետեւ հայ ժողովուրդին երգերը գրի առաւ ու անմահացուց:

1906 թուականին, Փարիզի մէջ, բոլոր ազգերու յայտնի երգիչներն ու երաժիշտները պիտի ներկայացնէին իրենց ազգային երգերը: Երբ հայ երաժիշտին կարգը հասաւ, ժողովուրդը ապշած դիտեց Կոմիտասը, որ սեւ զգեստով բեմ ելած էր: Ան սրինգով նուագեց «Հովիտի կանչը», յետոյ երգեց «Հորովելը» ու շահեցաւ առաջին մրցանակը:



Հայ մեծանուն երգահան Կոմիտաս Վարդապետի նուիրում յուշարձան մը կայ Գանատայի Քեպէզ քաղաքի «բանաստեղծներու զբօսայգի»ին մէջ:



Կոմիտաս Վարդապետի կիսանդրի մը կայ նաեւ Մոնթրէալի Հայ կեդրոնի մուտքին մօտ: Այս քանդակին հեղինակն է դոկտ. Մկրտիչ Տարագճեանը:

**ԳԻՆՁ**



Գինձը (coriandre) հովանոցաւորներու կարգին պատկանող բոյս մըն է, որ նման է ազատագեղին: Ան ունի հանգստացնող ու քնաբեր յատկութիւն:

Հնդկական բժշկութեան մէջ, գինձը կ'օգտագործուի որպէս ցաւազրկող կամ ցաւերը մեղմացնող բոյս: Ան կրնայ մեղմացնել ականջի ցաւը կամ գլխացաւը: Օգտակար այս բոյսը նաեւ ունի ախորժակը գրգռող եւ մարսողութիւնը կարգաւորող յատկութիւններ:

Հետաքրքրական է, թէ ինչպէս գինձը խարկելով եւ սխտորի հետ ծեծելով կը պատրաստեն չամանը, որ ապուխտի երեսին կը քսեն միաժամանակ կծու եւ անուշ համ տալու անոր:

Գինձը կ'օգտագործուի նաեւ որպէս համեմ տարբեր ճաշերու եւ թացանների (sauce) մէջ:



**ՄՐՋԻՒՆՆԵՐԸ**

1. Աւելի քան 16600 մրջինի տեսակ կայ:
2. Մրջինը կրնայ իր կշիռքէն 20 անգամ ատելին շակկել:
3. Մրջինները ականջ չունին:
4. Մրջինները 2 ստամոքս ունին:
5. Մրջինները թօք չունին եւ առանց թթուածինի կրնան ապրիլ 24 ժամ:
6. Մրջինները կրնան լողալ, բայց կրնան ծիպալ երկար ժամեր եւ կենալ ջուրին մէջ առանց խեղդուելու:

**ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԵՆ ՆԵՐՍ**

Ներկայիս համակարգիչի նոր տեսակ մը կայ, որ «Վիժըն Փրօ» (Vison Pro) կը կոչուի: Այս համակարգիչը խոշոր ակնոց մըն է, որ մուկ (mouse) չունի: Ակնոցին ընդմէջէն կը տեսնենք համակարգիչին պաստառն ու անոր վրայ գտնուող «այքըն»ները (icon):

Երբ մեր աչքերը ուղղենք որոշ «այքըն»ի մը վրայ եւ մեր բթամատն ու ցուցամատը սեղմենք, «այքըն»ը կը բացուի: Այսինքն մեր աչքերն ու մատները կը փոխարինեն մուկը:

«Վիժըն Փրօ» համակարգիչով հեռատեսիլի կամ համակարգիչի պաստառներու շրջանակներէն դուրս կու գանք եւ կը մտնենք 3D եռաչափ իրավիճակին մէջ: Այսպէս, տեսնելով լուսանկար մը կամ դիտելով տեսերիզ մը, մենք կ'ունենանք այն տպաւորութիւնը, որ մենք ներկայ ենք մեր դիտած լուսանկարին կամ տեսանիւթին մէջ:

«Վիժըն Փրօ»ով կարելի է նաեւ խաղալ համակարգչային խաղեր եւ հաղորդակցիլ Face Time-ի միջոցով:



Համակարգիչի այս տեսակը Apple ամերիկեան հաստատութեան վերջին գիտն է: Ան Փետրուար 2024-ին շուկայ իջաւ եւ ներկայիս կը գտնուի միայն Միացեալ Նահանգներուն մէջ: Ճիշդ է, որ ան բաւական ծանր է (մօտ 600 կրամ) եւ բաւական սուղ (3500 ամերիկեան տոլարէն սկսեալ), բայց շատ հաւանական է, որ ատելի ուշ ան ըլլայ ատելի թեթեւ՝ բնական ակնոցի մը նման եւ ատելի մատչելի բոլորին:



**ԾԱՆՕԹԱՆԱՆՔ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՅՔՆԵՐՈՒՆ**

**Ամբողջացրո՞ր պատկերը ապա գունավորէ՛:**

**Գրենական պիտույքներու հայերէն անունները**



**Սեղմակ**



**Կոճգամ**



**Սոսինձ**



**Դակիչ**



**Ամրակ**



**Կարիչ**



**Թղթապանակ**



**Ո՞վ Կ՛ՈՒՂԷ ԲԱԶՄԱԳԵՏ ԸԼԼԱԼ**

**1. Ի՞նչ կը խորհրդանշէ Ջատիկին ներկուող հաւկիթը:**

- Ա. Նոր կեանք:
- Բ. Մեծ պահք:
- Գ. Մեղքի կեանք:

**2. Ջատիկէն քանի՞ օր առաջ կը սկսի մեծ պահքի շրջանը:**

- Ա. 1 շաբաթ:
- Բ. 48 օր:
- Գ. 2 ամիս:

**3. Ո՞վ էր Հայաստանի Հանրապետութեան հասարակական գործիչը, որ նաեւ մասնակցած է Մարտակերտի, Ասկերանի, Մարտունիի, Լաչինի եւ Քելբաջարի կռիւներուն:**

- Ա. Կոմիտաս:
- Բ. Գագիկ Գինոսեան:
- Գ. Սեդրակ Երկանեան:

**4. Տաւուշը հարուստ է...**

- Ա. Հանքային ջուրերով, փայտով եւ մետաղով:
- Բ. Ածուխի եւ բնական կազի պաշարներով:
- Գ. Ադամանդով եւ ոսկիի հանքերով:

**5. 1188 թուականին, ո՞վ հիմնած է Գօշավանքը:**

- Ա. Մխիթար սպարապետ:
- Բ. Մխիթար Գօշ:
- Գ. Կոմիտաս:

**6. Կաթողիկոսը ո՞ր պատանիին համար ըսաւ. «Թո՛ղ հոս մնայ եւ ուսումը շարունակէ»:**

- Ա. Մեսրոպ Մաշտոցի:
- Բ. Յիսուսի:
- Գ. Կոմիտասի:

**7. Հնդկական բժշկութեան մէջ, գինձը կ'օգտագործուի որպէս ցաւազրկող կամ ցաւերը մեղմացնող բոյս:**

- Ա. Ճիշդ:
- Բ. Սխալ:

**8. Քանի՞ ստամոքս ունին մրջիւնները:**

- Ա. 2
- Բ. 3
- Գ. 4

**9. Ստորեւ գրուածներէն ո՞ր մէկը նուագարանի անուն է:**

- Ա. Սեղմակ
- Բ. Կարիչ
- Գ. Շուի

**10. Ձեռային աշխատանքներու ժամանակ, երբ թուղթի, փայտի կամ կաշիի կտորներ իրարու կ'ուզենք փակցնել, կ'օգտագործենք իւէժը: Իւէժին կ'ըսենք նաեւ ...**

- Ա. Սոսինձ
- Բ. Ամրակ
- Գ. Դակիչ



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757  
 Email: sylvia@horizonweekly.ca  
 Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի  
 Թիւր պատրաստեց Սալբի Էլէյճեան  
 Ձեւադրացք՝ Լորի Իսաչերեանի